ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 15-ին, հինգշաբթի, «Տօն Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ»: Ազգային եկեղեցական մեծ տոնի առթիվ չորեքշաբթի, երեկոյան ժամը 7-ին Մայր Տաճարում կատարվեց նախատոնակ:

Հինգշաբթի առավոտյան, ժամը 11-ին միաբանությունը ուխտի գնաց Օշական, ուր կատարվեց օրվա հանդիսավոր Սուրբ պատարագը: Պատարագեց և քարոզեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի Հայոց թեմի առաջնորդ գեր. Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը: Հավարտ Սուրբ պատարագի, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն, Վահան Ամատունի իշխանի շիրմաքարի վրա:

***

Հունիսի 19-ին, Կիրակի, «Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի»: Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ Վրդ. Շաքարյանը, «Ով իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոց. Աստուած է որ արդարացուցանէ» (Հռոմ. Ը. 33), բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Հունիսի 25-ին, Կիրակի:

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Գևորգ վրդ. Սերայտարյանը, «Առաքեալք սուրբ և ամբիծք և ընտրեալք յորովայնէ» շարականի բնաբանով:

***

Հունիսի 27-ին, երեքշաբթի:

Երեկոյան ժամը 6-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ժամանում Անգլիո Հայոց հայրապետական պատվիրակ Գեր. Տ. Պսակ Արք. Թումայանը: Հանուն Վեհափառ Հայրապետին Երևան օդանավակայանում Սրբազանին դիմավորում են Լուսարարապետ Տ. Հայկազուն Արքեպիսկոպոս և Տ. Ներսես Ծ. Վրդ. Պոզապալյանը:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո Տ. Պսակ Արքեպիսկոպոսը ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից Վեհարանում: Սրբազանը մի քանի օր Մայր Աթոռում անցկացնելուց հետո, հրաժեշտ տվեց Վեհափառ Հայրապետին և հունիսի 30-ին վերադարձավ իր պաշտոնատեղին:

***

Հուլիսի 2-ին, Կիրակի: «Վարդավառ»:

«Պայծառակերպություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Մայր տաճարում պատարագեց և քարոզեց Գեր. Տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, «Եւ գնասցեն թագաւորք ի լոյս քո եւ հեթանոսք ի ծագել լուսոյ քո» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Հուլիսի 8-ին, Երկուշաբթի: Մեռելոց:

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Նշան Քհն. Բեյլերյանը: Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգիստ «Վասն համօրէն ննջեցելոց»:

***

Հուլիսի 9-ին, Կիրակի: Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

***

Հուլիսի 16-ին, Կիրակի: Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ Քհն. Մկրտչյանը:

***

Հուլիսի 23-ին, Կիրակի: Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես Քահանա Մարուքյանը:

***

Հուլիսի 27-ին, Շաբաթ, Մայր Աթոռ վերադարձավ Գեր. Տ. Հայկազուն Արք. Աբրահամյանը, որը ընկերակցել էր Վեհափառ Հայրապետին մինչև Ժընեվ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնի տարվելիք Հայրապետական այցելության առիթով:

***

Հուլիսի 30-ին, Կիրակի: Մայր տաճարում պատարագեց Հոգ. Տ. Մուշեղ Վրդ. Պետիկյանը:

***

Օգոստոսի 6-ին, Կիրակի:
Մայր Աթոռում պատարագեց Հոգ. Տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը: